Արձանագրություն N 19/3-3

"ՔԵՆԴԼ-ԳՀԱՊՁԲ-19/3" ծածկագրով ARMEPS համակարգի միջոցով իրականացվող գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի ամփոփման նիստի

ք. Երևան 03 հունիսի 2019թ. Ժամը 14:30

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ (ԳԱ+ԳԱՊ)	Ս. Թաթիկյան,
Գնահատող անդամներ (ԳԱ)՝	Գ. Ամատունի,
Բացող անդամներ (ԲԱ)՝	Ա. Սարգսյան, Վ. Սահակյան,
Հանձնաժողովի քարտուղար (ՄՀմ)՝	Ա. Բաղրամյան

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը՝

1. ՀՀ ԿԱ ՊԵԿ-ից ստացված Եզրակացության գնահատում:
2. Առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից հաստատված, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի գնահատում:
3. Գնահատող հանձնաժողովի նիստերի անցկացման ժամանակացույցի մասին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. ՀՀ ԿԱ ՊԵԿ-ից ստացված Եզրակացության գնահատում

2.1 ՀՀ ԿԱ ՊԵԿ-ից ստացված Եզրակացության համաձայն առաջին տեղեր զբաղեցրած մասնակիցները՝ «Վանդիստ» ՍՊԸ-ն, «Այ-Թի Թրեյդինգ» ՍՊԸ-ն, «Կոմպմարկետ» ՍՊԸ-ն, «Այ-Թի Պլազա» ՍՊԸ-ն, հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ չունեն ժամկետանց հարկային պարտավորություններ:

3. Առաջին տեղեր զբաղեցրած մասնակիցների կողմից հաստատված, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի գնահատում

3.1 Առաջին տեղեր զբաղեցրած մասնակիցները սահմանված կարգով և ժամկետում էլեկտրոնային փոստի միջոցով գնահատող հանձնաժողովին են ներկայացրել իրենց կողմից էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը (Հրավերի հավելված NN 6 և 6.1): Ապրանքի ամբողջական նկարագիրը համապատասխանում է Հրավերով սահմանված՝ գնման առարկայի տեխնիկական բնութագրին:

Հիմք ընդունելով 2.1 և 3.1 կետերը գնահատող հանձնաժողովը որոշեց.

1. ՔԵՆԴԼ-ԳՀԱՊՁԲ-19/3 ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղեր զբաղեցրած մասնակիցներ «Վանդիստ» ՍՊԸ-ին, «Այ-Թի Թրեյդինգ» ՍՊԸ-ին, «Կոմպմարկետ» ՍՊԸ-ին, «Այ-Թի Պլազա» ՍՊԸ-ին ճանաչել համապատասխան չափաբաժիններով ընտրված մասնակիցներ:
2. Հաստատել և գնումների էլեկտրոնային տեղեկագրում հրապարակել <u>պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը և ընտրված մասնակիցների իրական շահառուների մասին տվյալները</u>:
3. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն սույն ընթացակարգի հետ կապված անգործության ժամկետը 5 օրացուցային օր է:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

4. Գնահատող հանձնաժողովի նիստերի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին

4.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05. 2017թ.N 526-Ն որոշման «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 29-րդ կետը՝ պայմանագիրը կնքելուն հաջորդող օրը Գնահատող հանձնաժողովը համարվում է լուծարված:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ	_____	Ս. Թաթիկյան
Գնահատող անդամ	_____	Գ. Ամատունի
Բացող անդամներ	_____	Ա. Սարգսյան
	_____	Վ. Սահակյան
Հանձնաժողովի քարտուղար	_____	Ա. Բաղրամյան